Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 1 (Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 298 էջ), Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2 (Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 404 էջ), Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3 (Երևան, «Տիր» հրատ., 2020, 394 էջ):

Պրոֆեսոր, պատմագիտության դոկտոր Ռաֆիկ Նահապետյանը հայ ազգաբանական գիտության նշանավոր մանկավարժ-գիտնականներից է: Նա ավելի քան 50 տարի դասավանդում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնում՝ ստեղծման իսկ օրից: Արդյունավետ դասախոսական աշխատանք կատարելուց բացի, աչքի է ընկնում նաև բեղուն գիտահետազոտական գործունեությամբ. հրատարակել է ավելի քան 150 գիտական ծավալուն հոդված, 9 մենագրություն: Հեղինակ է նաև 4 ուսումնական բուհական ձեռնարկի և մեկ տասնյակից ավելի ուսումնամեթոդական աշխատանքների: Վերջերս հրատարակվեցին Ռ. Նահապետյանի «Ազգաբանական ուսումնասիրություններ» երեք գրքերով հետազոտությունները՝ հայ ազգագրական գիտության աղբյուրագիտական, պատմագրական և թեմատիկ ընդգրկումներով:

Գիրք 1-ը ներառում է հայ ազգագրության սկզբնաղբյուրների մի մասին վերաբերող ուսումնասիրություններ: Այն բաղկացած է չորս բաժնից: Առաջին՝ «Դաշտային ազգագրական-բանահավաքչական նյութերը հայ ազգագրական գիտության սկզբնաղբյուր» խորագրով բաժնում ընդգրկված են «Դաշտային ազգագրական բանահավաքչական նյութերի գրառման շուրջ» և «Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությունից» ուսումնասիրությունները: Երկրորդ՝ «Հնագիտական (ժայռապատկերային) և բանահյուսական նյութերը հայ ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրներ» բաժնում ներառված են «Ժայռապատկերները հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների ազգաբանական ուսումնասիրությունների

սկզբնաղբյուր» և «Ամուսնաընտանեկան հարաբերությունների արտացոլումը «Սասնա Ծռեր» էպոսում» ուշագրավ ուսումնասիրությունները: Գրքի երրորդ բաժնում ներառված են հիմնականում V-IX դդ. պատմագիրներից Ագաթանգեղոսի, մասամբ նաև Փ. Բուզանդի պատմագրական երկերի ազգագրական երևույթների մեկնաբանությունները: Նկատենք, որ Փ. Բուզանդի «Հայոց պատմություն» երկի վերաբերյալ Ռ. Նահապետյանը առանձին մենագրություն է հրատարակել դեռևս 2013 թ.: Նույն բաժնում զետեղված են նաև «Ընտանեկան իրավունքը ըստ վաղմիջնադարյան եկեղեցական կանոնական և աշխարհիկ աղբյուրների», «Հայ ազգագրական տեղեկությունները ըստ Առաքել Դավրիժեցու «Պատմություն» երկի» և «Առաքել Դավրիժեցու տեղեկությունները XVII դ. սկզբներին հայության ժողովրդագրական պատկերի փոփոխությունների և հայկական տեղանունների մասին» ուսումնասիրությունները: Չորրորդ բաժնում հեղինակն անդրադարձել է արաբ և եվրոպացի ճանապարհորդների՝ Հայաստանի և հայերի վերաբերյալ ազգաբանական, տեղագրական դիտարկումներին. «Արաբ մատենագիրների ազգագրական վկայությունները հայերի մասին (Թ-ԺԴ դդ.)», «Միջնադարյան Հայաստանի գործվածքեղենը արաբ և եվրոպացի ճանապարհորդների գնահատմամբ (IX-XV դդ.)» և «XV-XVII դարերում եվրոպացի ճանապարհորդների ազգագրական վկայությունները Հայաստանի և հայերի մասին»: Դրանցում կատարված են հանգամանալի վերլուծություններ, վեր են հանվել Հայաստանի և հայերի վերաբերյալ ազգագրական երևույթների ամենաբազմազան կողմերը, որոնք իրոք ունեն հայագիտության համար աղբյուրագիտական կարևոր արժեք:

Ինչ խոսք, հայ ազգագրության սկզբնաղբյուրները չափազանց բազմազան են ու բազմաքանակ, ուստի դրանց ամբողջական ուսումնասիրությունը, իրոք, մեկ հետազոտողի ուժերից վեր է: Գիտենք, որ գիտնականի ուսումնասիրությունների առանցքը երկար տարիներ եղել են արևմտահայերի էթնոմշակութային բնութագրին վերաբերող ծավալուն հետազոտությունները, սակայն, ի պատիվ պրոֆեսոր Ռ. Նահապետյանի վերջին տարիների ջանքերի, ներկայումս շատ բան է արված այս ուղղությամբ. 2010 թ. հրատարակվել է «Հայ ազգագրության պատմություն. մաս 1՝ հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին», 2013 թ.՝ «Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում», 2018 թ.՝ «Հունական և հռոմեական սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին» մենագրությունները: Ներկա գիրքը ևս խոշոր ներդրում կլինի հայ ազգագրության սկզբնաղբյուրների ուսումնասիրությունն ամբողջացնելու առումով:

«Ազգաբանական ուսումնասիրություններ» երկրորդ գիրքն ընդհանուր առմամբ նորություն է մասնագիտական գրականության մեջ ու շատ արժեքավոր ուսումնասիրություն ազգագրությամբ և մշակութաբանությամբ մասնագիտացող ուսանողների, ազգագրագետների, պատմաբանների համար: Գիրքը լրացնում և ամբողջացնում է հայ ազգագրության՝ իբրև ուրույն գիտության ձևավորման և կայացման պատմությունը, ինչն առ այսօր արված չէր: Երկարամյա դասախոսը, զգալով հայ ազգագրության սկզբնաղբյուրների և պատմության վերաբերյալ դասագրքերի և մենագրությունների պակասը, վերջին տասնամյակում իրեն նվիրել է դա լրացնելու գործին: Գրախոսվող գիրքը ներառում է հայ ազգագրական գիտության ձևավորման շրջանի գործիչների՝ Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի, Վենետիկի Մխիթարյան միաբանության գիտնականների, մասնավորապես՝ Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի, Ղ. Ալիշանի, Վ. Հացունու, հայ ազգագրության առաջին ծրագիր-հարցարաններ կազմողների՝ Գ. Սրվանձտյանցի, Գր. Խալաթյանցի և նրանց հետևորդների գործունեությունը, որոնք նոր ձևավորվող գիտությունը, որպես հայագիտության ուրույն ոլորտ, դրեցին գիտական հիմքերի վրա: Գրքում առավել հանգամանորեն ներկայացվում են նաև հայ ազգագրական գիտության կայացումն ավարտին հասցնող Ե. Լալայանի ներդրած անուրանալի վիթխարի ջանքերը: Առանձին բաժնով ներկայացված է հայ ազգագրականգիտությանը մատուցած խորհրդային՝ 1920-1940 թթ. գիտնականների՝ Ե. Լալայանի, Ստ. Լիսիցյանի, Խ. Սամուելյանի, Մ. Աբեղյանի, Գ. Ղափանցյանի, Հ. Օրբելու և մյուսների ծառայությունները: Հեղինակը թեև հակիրճ, բայց ամբողջովին անդրադառնում է խորհրդային շրջանի 1950-1980-ական թթ. ազգագրագետների և գիտահետազոտական, թանգարանային ու ուսումնական հաստատությունների ծավալած լայն գործունեությանը: Այս շարքում ներկայացված է ակադ. Հովսեփ Օրբելու, նշանավոր ազգագրագետներ Վ. Բդոյանի, Դ. Վարդումյանի, Է. Կարապետյանի, Ա. Օդաբաշյանի, Կ. Մելիք-Փաշայանի, Կ. Սեղբոսյանի, Լ. Պետրոսյանի, Յու. Մկրտումյանի, Զ. Խառատյանի, բանագետ Ս. Հարությունյանի և այլոց ազգագրական գործունեությունը: Առաջին անգամ առանձին հիմնավոր տրված է Հ. Օրբելու և Վ. Բդոյանի ազգագրական գործունեության վերլուծությունը:

Գրախոսվող այս երկու գրքերի հրատարակության շնորհիվ մեր ձեռքի տակ ունենում ենք հայ ազգագրության սկզբնաղբյուրների և պատմագրության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ:

«Ազգաբանական ուսումնասիրություններ» գիրք 3-ը պրոֆեսոր Ռ. Նահապետյանի արդյունավետ գիտահետազոտական գործունեության արգասիքներից է: Նրանում ներկայացվում են հայ ազգագրության գրեթե բոլոր հիմ-

նահարցերին վերաբերող գիտնականի հետազոտությունները: Հարուստ գրականության օգտագործմամբ Հայկական լեռնաշխարհը ներկայացվում է որպես երկրագործ-անասնապահական մշակույթների, բնակարանաշինական ավանդների հինավուրց կենտրոն: Առանձին խումբ են կենսապահովման մշակույթի համալիրներից ժողովրդական բնակարանի, ազգային հագուստի և ուտեստի էթնոմշակութային բնութագրին վերաբերող ուսումնասիրությունները: Առանձին շարք են արևմտահայոց, մասնավորապես պատմական Աղձնիքի ժողովրդագրության, ավանդական տնտեսական-արտադրական մշակույթին վերաբերող հարցերը, ավանդական ընտանիքին, հյուրընկալման դարավոր սովորույթներին, ընտանեկան վարվելակարգին ու խուսափման սովորույթներին, ընտանեկան խորհրդանիշ՝ օջախ-թոնրի պաշտամունքային ժողովրդական ընկալումներին, ընտանիքում և հասարակության մեջ կնոջ ավանդական կարգավիճակին ու գործառույթներին, հայոց ընտանեկան կյանքում քավորի կերպարին վերաբերող հետազոտությունները: Ուշագրավ են նաև ազգագրական դիտարկումներ շարքից առանձին թեմաների ու հեղինակների հետազոտությունների վերաբերյալ հեղինակի ակնարկները:

Պրոֆեսոր Ռաֆիկ Նահապետյանի վերոնշյալ ուսումնասիրությունների մեծ մասը ամբողջական կերպով առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Դրանք գնահատելի գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող ազգաբանական, մշակութաբանական, պատմագիտական ուսումնասիրություններ են, որոնք օգտակար կլինեն ազգագրությամբ, հնագիտությամբ և մշակութաբանությամբ մասնագիտացող ուսանողներին, հայոց պատմության ու մշակույթի հարցերով զբաղվող մասնագետներին, ընթերցասեր լայն հասարակությանը:

Երեք գրքերն էլ ներկայացված են նաև ռուսերեն և անգլերեն ընդարձակ ամփոփումներով: Համոզված ենք, որ հեղինակը կշարունակի իր գիտահետազոտական արդյունավետ ու տարաբնույթ ուսումնասիրությունները, որով առավել կամբողջացվեն ու կհամալրվեն հայ ազգագրության սկզբնաղբյուրներն ու պատմագրությունը, գիտության մյուս ոլորտները: Ցանկալի կլիներ, որ գրքերում չլինեին երբեմն-երբեմն տեղ գտած անհարկի կրկնությունները:

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
Պատմագիտության դոկտոր

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ
Պատմագիտության դոկտոր